ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) 10-րդ նախարարական գագաթաժողովը և 5-րդ Քաղաքականության ֆորումը

1. *Անունը, Ազգանունը*

   Արայիկ Հարությունյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարար

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ),

   2018 թվականի մայիսի 23-25-ը:

4. *Հրավիրող կողմը*

   Ֆրանսիայի կրթության, գիտության և նորարարությունների նախարարությունը և Բոլոնիայի քարտուղարությունը

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը*)

   Մասնակցություն նախարարական գագաթաժողովի և քաղաքականության ֆորումի աշխատանքներին, հանդիպում Բոլոնիայի քարտուղարության հետ

6. *Քննարկված թեմաները*

   Մայիսի 24 և 25-ին Փարիզում տեղի ունեցան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի 10-րդ նախարարական գագաթաժողովը և 5-րդ Քաղաքականության ֆորումը: Բարձրագույն կրթության համար այս կարևոր միջոցառումները տեղի ունեցան Սորբոնի դեկլարացիայի (1988) ստորագրումից 20 տարի հետո, որը հանդիսավորությամբ նշվեց Սորբոնի համալսարանում մայիսի 23-ին: Միջոցառումներին մասնակցում էին 70-ից ավելի երկրներ, 39 միջազգային կազմակերպություններ և Եվրոպական հանձնաժողովը: Ներկա էին մեծ թվով նախարարներ թե՛ եվրոպական, թե աշխարհի տարբեր երկրներից: Փարիզի համաժողովը մեկ անգամ ևս հաստատեց երկրների հաստատակամությունը համատեղ զարգացնել 48 ազգային բարձրագույն կրթության համակարգերը՝ պահպանելով դրանց առանձնահատկությունները և միաժամանակ դարձնելով դրանք էլ ավելի համադրելի: Փարիզյան միջոցառումները կարևոր էին նաև Եվրոպական մշակույթի, գիտելիքի, լեզվի փոխանակման և միասնականության առումով:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

ԵԲԿՏ-ի նախարարական գագաթաժողովի պաշտոնական բացման համար բեմ հրավիրվեցին Ֆրանսայի, Բուլղարիայի և Սերբիային կրթության նախարարները, որոնք ողջունելով մասնակիցներին մեկ անգամ ևս նշեցին Բոլոնիայի գործընթացի կարևորությունը ոչ միայն եվրոպական տարածաշրջանի երկրների, այլև աշխարհի այլ երկրների համար: Բարձրագույն կրթության համակարգերի բարեփոխումների գործընթացը բովանդակությամբ և հարցերի ընդգրկունությամբ աննախադեպ է, և 20 տարիների ընթացքում հաջողությամբ իրականացրել է մի շարք կարևոր կառուցվածքային բարեփոխումներ: Մշակվել և ներդրվել են գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս ունենալ որակյալ և մատչելի կրթություն, որը խթանում է շարժունությունը:

Այնուհետև Էստոնիայի կրթության նախարարը ներկայացրեց Փարիզի կոմյունիկեի հիմնական դրույթները, ինչպես նաև նշեց այն խնդիրները, որոնք առկա են բարեփոխումների իրականացման ընթացքում: Նույն համատեքստում ներկայացվեց 2018 կիրառման հաշվետվությունը՝ հիմնական ձեռքբերումներով և մարտահրավերներով:

Միջոցառումների երկու օրերի ընթացքում կազմակերպվեցին առանձին քննարկումներ բարեփոխումների գործածման, բուհական հիմնարար արժեքների, ինչպես նաև եվրոպական համալսարանների ապագայի վերաբերյալ: Նախարարական գագաթաժողովի վերջում վավերացվեցին Փարիզի կոմյունիկեն և Քաղաքականության ֆորումի հռչակագիրը:

Փարիզի կոմյունիկեում շեշտադրվեցին կառուցվածքային ռեֆորմների հետագա կիրառումը: Այդ նպատակով նախարարները որոշեցին հիմնել մի համակարգող խումբ, որ հաջորդ երեք տարիների ընթացքում իր ուշադրության կենտրոնում կպահի, աստիճանային համակարգը և դրա կապը որակավորումների ազգային համակարգերի հետ, որակի ապահովման և որակավորումների ճանաչման հիմնահարցերը: Խումբը կօգտագործի ցիկլային մեթոդաբանություն խնդիրների և երկրների բացահայտման համար: Այնուհետև կկազմակերպվեն “peer learning” հանդիպումներ այդ բարեփոխումներ հաջողությամբ ներդրած երկրների հետ: Կումյունիկեի մյուս առաջնայնություններն են՝ նորարարությունները ուսուցման և դասավանդման գործընթացում և եվրոպական բուհերի ապագան:

Ընտրվեց նաև հաջորդ նախարարական գագաթաժողովը ընդունող երկիրը՝ Իտալիան, որը նաև կհամակարգի գործընթացը 2018-2020թթ.:

8. *Գործուղվողը*

ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

9. *Ստորագրությունը, ամսաթիվը*

Արայիկ Հարությունյան

22/06/2018